# «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ»
# ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ
## ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության փաստաբանական ակադեմիա» հիմնադրամի (**այսուհետ՝ ՀՀ փաստաբանական ակադեմիա**) վեց անդամից կազմված կառավարման խորհուրդը, մասնակցությամբ Խորհրդի նախագահ Սիմոն Բաբայանի, անդամներ Նիկոլայ Հակոբյանի, Լյուդվիկ Դավթյանի, Լեռնիկ Հովհաննիսյանի և Տիգրան Խուրշուդյանի,

հաշվի առնելով ««Փաստաբանության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 05.10.2022թ. (ՀՕ ՀՕ-366-Ն) օրենքի 41-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը,

ղեկավարվելով «Հիմնադրամների մասին» օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով, «Փաստաբանության մասին» օրենքի 45.4-րդ հոդվածի 12-րդ մասի 9-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածով, ինչպես նաև ՀՀ փաստաբանական ակադեմիայի կանոնադրության 57-րդ կետի 17-րդ ենթակետով,

միաձայն

## ՈՐՈՇԵՑ՝

1. **Ուժը կորցրած ճանաչել՝**
   1) «Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոց» հիմնադրամի խորհրդի՝ «Ուսուցման կազմակերպման ընթացակարգը հաստատելու մասին» 17.11.2021թ. թիվ 7/2-Լ որոշումը.
   2) «Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոց» հիմնադրամի խորհրդի՝ «Հատուկ ուսուցման ծրագիրը հաստատելու մասին» 20.06.2022թ. թիվ 08/01-Լ որոշումը.

**30 նոյեմբերի 2022թ.**
**թիվ 13/14-Լ**

3) «Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոց» հիմնադրամի խորհրդի՝ «Ուսման վարձի զեղչի այլ դեպքեր սահմանելու մասին» 29.08.2022թ. թիվ 10/02-Լ որոշումը.
4) «Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոց» հիմնադրամի խորհրդի՝ «Ունկնդիրների վարքագծի կարգապահական կանոնները սահմանելու մասին» 17.11.2021թ. թիվ 7/3-Լ որոշումը.
5) «Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոց» հիմնադրամի խորհրդի՝ «Կարանտինի պայմաններում անցկացված որակավորման քննությունը չհանձնած և որակավորման քննությանը անհարգելի պատճառով չմասնակցած ունկնդիրների հատուկ ուսուցման ծրագիրը հաստատելու մասին» 05.12.2020թ. թիվ 09/01–Լ որոշումը.
6) «Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոց» հիմնադրամի խորհրդի՝ «ՀՀ փաստաբանների պալատի և «Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոց» հիմնադրամի աշխատակիցներին ՀՀ փաստաբանական դպրոց դիմելու համար մասնակցության վճարի և ուսման վարձի գծով արտոնություններ տրամադրելու վերաբերյալ» 28.12.2015թ. թիվ 08/02-Լ որոշումը:

**2. Սահմանել, որ «Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոց» հիմնադրամի խորհրդի՝ «Հատուկ ուսուցման ծրագիրը հաստատելու մասին» 20.06.2022թ. թիվ 08/01-Լ որոշումը գործում է ՀՀ փաստաբանական ակադեմիան (ՀՀ փաստաբանական դպրոցը) 2022 թվականին ավարտած ունկնդիրների հետ հարաբերություններում:**

ՀՀ փաստաբանական ակադեմիայի
կառավարման խորհրդի նախագահ՝ Սիմոն Բաբայան

**30 նոյեմբերի 2022թ.**
**թիվ 13/14-Լ**
**ք. Երևան**